

Փարիզ: 2001 թ.: Հոկտեմբերի վերջ: Ամսաթիվը նույնիսկ չեմ հիշում, որովհետեւ ես եւ դուստրս՝ Աննան, թրեւ ենք գալիս մեր քեֆին եւ ոչ ժամանակ գիտենք, ոչ պատարագ:

Այսօր հաստատ գիտեմ, որ երկուշաբթի է, եւ մենք եղանք նկարիչ Ժանսեմի արվեստանոցում: Այս հանդիպումը ծրագրված չէր: Պատահականություն էր, որ Աննայի հետ զբոսնելով, Շանգեյից թեքվեցինք Մատինյոն փողոց եւ հայտնվեցինք նույն փողոցի անունը կրող «Մատինյոն գալերիի» դիմաց, որը Ժանսեմի ընտանիքի սեփականությունն է: Ներս մտանք: Ցուցադրված էին Ժանսեմի վերջին շրջանի աշխատանքները, որոնցում արտացոլված էր Հայոց ցեղասպանության ողբերգությունը: Կարծում եմ, միայն հայ արվեստագետը կարող էր վրձնել այդ սարսափազդու մեծածավալ կտավները: Բայց Ժանսեմի կինը, որի հետ հանդիպեցինք ցուցասրահում, իմ հարցին, թե արդյոք այս կտավները նվիրված են հայոց մեծ ողբերգության՝, ժխտական պատասխանեց: Համենայն դեպս, Ժանսեմի կնոջ շնորհիվ մենք մի քանի օր հետո հայտնվեցինք վարպետի արվեստանոցում: Մադամ Ժանսեմը, չնայած իր պատկառելի տարիքին, սուր աչք ուներ եւ զրույցի ընթացքում երեւում էր, որ հետաքրքրությամբ ուսումնասիրում է աղջկաս դիմագծերը: Առաջարկեց, որ Ժանսեմը նկարի Աննային: Մի քանի օր անց զանգահարեցի Ժանսեմին, ձայնը լավ չէր լսվում, մի կերպ բացատրեց արվեստանոցի տեղը, եւ պայմանավորվեցինք հանդիպել: Բայց քանի որ լավ չէի ճանաչում քաղաքը, նշանակված ժամին Աննայի հետ հայտնվեցինք քաղաքի հակառակ ծայրում՝ Մարի դե Իսիի փոխարեն՝ Մարի դե Իվրիում: Ամեն դեպքում, ճշտելուց հետո մեկ ժամ ուշացումով հասանք տեղ: Ժանսեմն ապրում եւ աշխատում է նույն վայրում, Իսի դե Մուլինո թաղամասի Վիլլա Շերոզե փոքրիկ փողոցի մի անկյունում, որտեղ իր նախագծով (իսկ Ժանսեմը մասնագիտությամբ ճարտարապետ է, հետաքրքիր է, որ Գառզուն էլ էր մասնագիտությամբ ճարտարապետ) կառուցել է արվեստանոց, տուն, ունի այգի: Այն, ինչ հարկավոր է նկարչին: Շատ հետաքրքիր զրուցակից դուրս եկավ 81 տարեկան նկարիչը: Խելացի մարդ է, գիտե իր իրական արժեքն արվեստի աշխարհում, եւ ավելին, քան կա, չի փորձում ձեւանալ: Հետո սկսեց Աննային նկարել, նկարում էր մատիտով ու պաստելով: Մի դիմանկար նկարեց դիմացից, երկրորդը պրոֆիլ: Շատ հետաքրքիր էր հետեւել նրա դողացող ձեռքի, մատների շարժումներին թղթի վրա: Մատիտը դեռ անթերի ենթարկվում էր վարպետին, եւ չնայած տախտակը, որի վրա փակցված էր թուղթը, դղրդում էր, գործն առաջ էր գնում: Բնատուր գծանկարիչ է: Ես տեսնում էի, որ լավ է ստացվում: Կարծում եմ, ինքն էլ գոհ մնաց: Ցանկություն հայտնեց մի ուրիշ անգամ նորից նկարել Աննային: Ես էլ հիշեցի, որ Աննային արդեն շատերն են նկարել, Գառզուն էլ այդպիսի մտադրություն ուներ, բայց չստացվեց: Կարելի է նույնիսկ պատկերասրահ բացել Աննայի դիմանկարներից բաղկացած:

Հետո մենք մի քանի ժամ զրուցեցինք չզգալով, թե ոնց է ժամանակը հոսում: Զգացվում էր, որ տրամադրված էր զրույցի: Կարծում եմ, որ ինքն էլ ուրախացել էր, որ իր հանգիստ կացարանում իրեն զրուցակից է գտել: Հաստատեց իմ այն միտքը, որ վերջին նկարների շարքը նվիրված է Հայոց եղեռնին: Բայց ավելացրեց, որ չի ցանկացել վերնագրերում դա շեշտել: «Հասկացողն այնպես էլ կհասկանա»: Պատմեց, որ իր մայրը Եղեռնի արհավիրքներով է անցել: Ընտանիքը կորցրած 12 տարեկան աղջիկը հրաշքով փրկվել է անցնելով Հալեպ-Դեր Զոր գողգոթան: Ժանսեմի հայրն էլ է անցել այդ սարսափելի ճանապարհը, եւ նրան կյանք է բաշխել մի թուրք ասկյար, որը արդեն հազեցած սարսափելի տեսարաններով, հիշել է, որ դասընկերներ են եղել: Ասել է ընտրիք հետո մի քանի հոգու, որ ձեզ փորձեմ ազատել: Ժանսեմի հայրը մի քանի ազգականների հետ փրկել է նաեւ այդ 12 տարեկան որբ աղջկան: Հետո ամուսնացել են եւ ծնվել է Ժանսեմը: Տարիներ անց մայրը պատմել է իր տղային այն, ինչ հիշում էր: Եվ ահա, 80 տարեկան Ժանսեմը նկարում է այդ դժոխքը, այնպես, կարծես ինքն ակնատես եղած լիներ:

Ասաց եւ մի քանի անգամ կրկնեց, որ ինքը բախտավոր մարդ է եւ միշտ բախտը բերել է, եւ շեշտեց, որ դա շատ կարեւոր է ցանկացած մարդու համար, մանավանդ արվեստագետի: Պատմեց, որ դեռ 38 տարեկան էր, երբ նկարները սկսեցին տաք-տաք բլիթների նման գնել: Հասավ նրան, որ հենց արվեստանոցում, դեռ չնկարած կտավի վրա գրում էին նկարը գնված է:

Պատմեց Մատինյոն փողոցում գտնվող պատկերասրահը գնելու պատմությունը: Մատինյոնը Փարիզի ամենաթանկ փողոցներից մեկն է: Այդ փողոցում տարածք ձեռք բերելը գրեթե անհնարին է: Բայց այդ տարին Ֆրանսիայում տնտեսական ճգնաժամ էր, նկար առնող չկար, բոլոր գալերեաներն իրար հետեւից փակվում էին կամ վաճառվում: Ժանսեմը բավականին գումար ուներ կուտակած եւ շատ հարմար գնով ձեռք բերեց այդ փոքրիկ տարածքը: Հետո դրան ավելացրեց կողքի ավելի մեծ տարածքը, որը պահեստ էր եւ ոչ մեկի մտքով չէր անցնում, որ կարելի է այդ երկու մասերը միացնել: Իսկ ինքը, ճարտարապետի կրթություն ունենալով, միանգամից կռահեց ինչ անել:

Պատմեց, որ ժամանակ առ ժամանակ պահանջ է զգում հեռանալ սովորական միջավայրից, երբ 38 տարեկանում նկարները հեշտությամբ էին վաճառվում, ինքն անհանգստացել է, որ չլինի թե սալոնային նկարիչ է դարձել, եւ փախել է Իտալիա: Երկար ժամանակ գյուղերում տներ է վարձել, թափառել է եւ նկարել: Եվ դա կրկնվել է իր կյանքում մի քանի անգամ:

Պատմեց, որ երիտասարդ ժամանակ ցուցասրահում Գառզուի նկարած կտավն ինչ-որ մեկին բացատրելիս է եղել, երբ հետեւում հայտնվել է ինքը՝ Գառզուն: Լսելով նրանց զրույցը, Գառզուն հարցրել է. «Որ այսպես լավ բացատրում ես, երեւի ինքդ էլ նկարում ես»:

Ժանսեմն, իհարկե, դրական է պատասխանել, եւ հետո մի առիթով ցույց է տվել իր աշխատանքները վարպետին: Գառզուն երկու նկար է գնել իրենից: Դա մեծ վարպետի վերաբերմունքի դրսեւորումն էր տաղանդավոր երիտասարդի նկատմամբ:

Սեդանին ջութակ էր դրված: Պատմեց, որ այս պատկառելի տարիքում որոշել է ջութակ նվագել սովորել: Փորձել է հատուկ դասընթացներ հաճախել, շատ լուրջ բացատրել են, որ իրավունք չունեն պարապելու 70-ն անց մարդկանց հետ (Ժանսեմնը շատ համով-հոտով էր պատմում, ինքն էլ ծիծաղում էր):

Ասաց. «Ես էլ որոշեցի ինքս սովորել առանց դասախոսի: Ասում են մի տասը տարի պետք է, դե ես էլ չեմ վրագում»:

Շատ ծիծաղեցինք, երբ պատմեց, որ երբ նոր էր սկսել ջութակ նվագել, իրենց շունն ամեն անգամ այդ ձայներից սկսում էր ոռնալ, եւ հետո, երբ Ժանսեմնը ձեռքն էր վերցնում ջութակը, սարսափահար փախչում էր: Հետո սկսեց չփախչել եւ չէր էլ ոռնում, եւ Ժանսեմնը հասկացավ, որ ինչ-որ մի բան արդեն ստացվում է: Էլի ինչ-որ բաներ պատմեց: Հիշեց, որ Ժամանակին իր արվեստանոց է այցելել Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը: Ժանսեմնը շատ էր հավանել Վեհափառին՝ նրա պարզության, շիտակության, հասարակ պահվածքի համար: Նկար էր նվիրել Վեհափառին, որն այժմ գտնվում է Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանում: Հետաքրքիր գրույցը շարունակվում էր, չնկատեցինք ոնց մութն ընկավ: Ասաց, որ չի սիրում էլեկտրական լույսի տակ նստել արվեստանոցում եւ մանավանդ նկարել: Հետո մենք փոխանակեցինք մեր ալբոմները մակագրություններով: Ես նրան նվիրեցի նաեւ Գեղարվեստի ակադեմիայի ալբոմը եւ Միլվա Սուքիասյանի՝ իմ մասին գրած գիրքը: Աղջկաս նվիրեց մի լիթոգրաֆիա իր մակագրությամբ:

Ժանսեմնի հետ մեր առաջին եւ առայժմ միակ այդ հանդիպումը Փարիզում միշտ կմնա իմ հիշողության մեջ:

ԱՐԱՄ ԻՍԱԲԵԿՅԱՆ

https://www.azg.am/index_wap.php?nl=AM&id=2002042417&Base_PUB=0